04.02. 2015թ.

Հարգելի Մասնակից

«ՀՀՌՑ-15.2-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով մրցույթի շրջանակներում «ՀՀՌՑ» ՓԲ ընկերության կարիքների համար անհրաժեշտ է ձեռք բերել Գնումների աջակցման կենտրոնի «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» մրցույթի արդյունքում կնքված գնման նախնական պայմանագրով նախատեսված ապրանքները:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով, վարչական շենքի 19 սենյակ, Մ. Նիկոլյանին, մինչև 2015թ. փետրվարի 16-ը, ժամը 15.00-ը:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է Մարինա Նիկոլյանը:

Հայտերը կբացվեն «ՀՀՌՑ» ՓԲ ընկերության վարչական շենքի նիստերի դահլիճում, 2015թ. փետրվարի 16-ին, ժամը 15.00-ին:

Գնման առարկա է հանդիսանում «ՀՀՌՑ» ՓԲ ընկերության կարիքների համար անխափան սնուցման սարքերի ձեռքբերումը:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» մրցույթի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք ընթացակարգին մասնակցելու դիմումի, գնային առաջարկի օրինակելի ձևերը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Գնման նախնական պայմանագիր կնքած անձը չի կարող ներկայացնել մեկից ավելի գնային առաջարկ, գնային առաջարկների հավասարության դեպքում ոչ գնային պայմաններին բավարար գնահատված մասնակիցների հետ գները նվազեցնելու նպատակով կազմակերպվելու են միաժամանակյա բանակցություններ:

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ

Հավելված 1
«ՀՀՌՑ-15.2-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով ընթացակարգի հրավերի
գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ
Դ Ի Մ ՈՒ Մ

_____հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու «ՀՀՌՑ» ՓԲԸ-ի
/Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)/

կողմից «ՀՀՌՑ-15.2-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով հայտարարված ընթացակարգի _____
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից
/Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)/

հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող դիրքի
/Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)/

չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____ -ի էլեկտրոնայանին փոստի հասցեն է՝ «Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե»:
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____2015թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 2
«ՀՀՌՑ-15.2-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովին

ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ՀՀՌՑ-15.2-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ գնի՝

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	*Անխափան սնուցման սարք UPS 600 Վտ*			
2	*Անխափան սնուցման սարք UPS 700 Վտ*			
3	*Անխափան սնուցման սարք UPS 1000 Վտ*		-	
4	*Անխափան սնուցման սարք UPS 2000 Վտ*			
5	*Անխափան սնուցման սարք UPS 3000 Վտ*			
6	*Անխափան սնուցման սարք UPS 40000 Վտ*			

**3-րդ սյունակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*

***Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

<u>Յուրաքանչյուր չափաբաժնի համար գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ոչ թե միավորի, այլ պայմանագրի կատարման համար առաջարկվող գնով (տվյալ չափաբաժնի ամբողջ քանակի համար առաջարկվող գնով): Եթե մասնակցի կողմից գնային առաջարկը ներկայացվի միավորի գնով, ապա վերջինիս հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:</u>

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____2015թ.
(ամսաթիվը, ամիսը)

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ
վառելիքի գնման
N ՀՀՌՑ-15.2-ՇՀԱՊՁԲ-11/12

ք. Երևան 2015թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս գլխավոր տնօրեն Գ. Ամալյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և _____ ընկերությունը, այսուհետ՝ «Մատակարար», ի դեմս տնօրեն _____-նի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հետագա համատեղ հիշատակմամբ «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Մատակարարը պարտավորվում է Գնորդին մատակարարել սույն պայմանագրի բաղկացուցիչ մասը կազմող Տեխնիկական բնութագրով (Հավելված 1) նախատեսված ապրանքը (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա դիմաց:

1.2 Ապրանքի անվանումը, քանակը, գինը բերվում է պայմանագրի Տեխնիկական բնութագրում:

2. Կողմերի պարտավորությունները

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 առանց մատակարարված Ապրանքի դիմաց վճարելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե մատակարարված Ապրանքը չի համապատասխանում Տեխնիկական բնութագրի պահանջներին և (կամ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը և Ապրանքը չի կարող մատակարարվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

2.1.2 չընդունել մատակարարված Ապրանքը՝ տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Մատակարարից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 ցանկացած ժամանակ հրաժարվել Պայմանագիրը կատարելուց՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Մատակարարին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Ապրանքը Մատակարարից ընդունելու ժամանակ ստուգել դրա համապատասխանությունը Տեխնիկական բնութագրին,

2.2.2 սույն պայմանագրով սահմանված կարգով վճարել Ապրանքի համար:

2.3 Մատակարարն իրավունք ունի

2.3.1 իր ընտրությամբ պահանջել վճարելու Ապրանքի համար կամ հրաժարվել պայմանագիրը կատարելուց, եթե Գնորդը սույն պայմանագրի խախտմամբ հրաժարվում է Ապրանքն ընդունելուց և (կամ) դրա դիմաց վճարելուց:

2.3.2 ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Գնորդին:

2.4 Մատակարարը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ Տեխնիկական բնութագրով սահմանված ժամկետներում և կարգով:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1 Սույն պայմանագրով Ապրանքի ընդհանուր գինը կազմում է _____ (_____) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ՝ _____ (_____) ՀՀ դրամ:

3.2 Գնորդը ձեռքբերված Ապրանքի համար վճարում է անկանխիկ, դրամական միջոցները Մատակարարի՝ սույն պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, հանձնման-ընդունման արձանագրության երկկողմ ստորագրման օրվանից հաշված 10 (տասը) բանկային օրվա ընթացքում:

3.3 Պայմանագրի գինը կայուն է և անփոփոխ՝ Պայմանագրի գործողության ընթացքում:

4. Ապրանքի հանձնումը և ընդունումը

4.1 Մատակարարը Ապրանքը հանձնում է Գնորդին՝ սույն պայմանագրի Տեխնիկական բնութագրով նախատեսված ժամկետում և ծավալներով:

4.2 Ապրանքի վաղաժամկետ մատակարարումը թույլատրվում է:

4.2 Մատակարարը՝ Ապրանքի հանձնման ավարտից երկու աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված 4):

4.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Մատակարարին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Ապրանքը ընդունված է համարվում Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից երկկողմ հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

5. Երաշխիքները

Ապրանքի առանձին տեսակների անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում Գնորդը իրավունք ունի պահաջելու, իսկ Մատակարարը պարտավոր է իր հաշվին կատարելու Ապրանքի փոխարինումը, առանց Գնորդի կողմից փոխադրման ծախսերի լրացուցիչ վճարների:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը ՝շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը ՝այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Մատակարարը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և սույն պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետի պահպանման համար:

7.2 Մատակարարի կողմից գնման ժամանակացույցով սահմանված ժամկետի խախտման դեպքում Մատակարարից յուրաքանչյուր ուշացած օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի չկատարված մասի 0.05%-ի չափով:

7.3 Գնորդի կողմից 3.2 կետով սահմանված վճարման ժամկետի խախտման դեպքում Գնորդից յուրաքանչյուր ուշացած օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի չկատարված մասի 0.05%-ի չափով:

7.4 Մատակարարի կողմից Տեխնիկական բնութագրով նախատեսված պայմաններին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու դեպքում Մատակարարից գանձվում է տուգանք՝ պայմանագրի ընդհանուր գնի 0.5 %-ի չափով:

7.5 Սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ապրանքը մատակարարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

7.6 Տույժերի և/կամ տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Այլ պայմաններ

8.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրով նախատեսված սարքավորումները մատակարարվում են այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա Կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու միջոցով: Սույն պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքվելու օրվան հաջորդող տարվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

8.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի գրավոր համաձայնությամբ:

8.3 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

8.4 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողություն կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Մատակարարը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Մատակարարին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Մատակարարի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Մատակարարը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասները, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարման ապահովմամբ Գնորդի ստացածով:

8.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով::

8.6 Սույն Պայմանագրով չնախատեսված մնացած բոլոր դեպքերում Կողմերը ղեկավարվում են ՀՀ օրենսդրությամբ:

8.7 Կողմերից որևէ մեկը իրավասու չէ սույն Պայմանագրից բխող իրավունքները փոխանցել երրորդ կողմին, առանց Կողմերի գրավոր համաձայնության:

8.8 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

9. Կողմերի վավերապայմանները

Գնորդ՝	Մատակարար՝
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95	
«Յունիբանկ» ՓԲԸ	
հ/հ 24100200177400	հ/հ
ՀՎՀՀ 01501898	ՀՎՀՀ
	Էլ. հասցեն՝
Գնորդի կողմից	Մատակարարի կողմից
Գ. Ամալյան	
_____	_____
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« » « » 2015թ. կնքված
N ՀՀՌՑ-15.2-ԾՀԱՊՁԲ-11/12 գնման պայմանագրի

Տ ե խ ն ի կ ա կ ա ն բ ն ու թ ա գ ի ր
Անխափան սնուցման սարքի (UPS) ձեռքբերման

Հ/հ	*անվանումը*	*չափ. միավ.*	*քանակը*
1	*UPS 600 Վտ*	*հատ*	*145*
2	*UPS 700 Վտ*	*հատ*	*55*
3	*UPS 1000 Վտ*	*հատ*	*2*
4	*UPS 2000 Վտ*	*հատ*	*1*
5	*UPS 3000 Վտ*	*հատ*	*5*
6	*UPS 40000 Վտ*	*հատ*	*2*

Ապրանքը պետք է լինի չօգտագործված
Տեխնիկական բնութագրերը ըստ հավելված 1/1-ի

Մատակարարման ժամկետը՝	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երեսուն աշխատանքային օրվա ընթացքում
Մատակարարման վայրը՝	ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
Վճարման պայմանները՝	համաձայն պայմանագրի
Գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշները՝	Մասնակիցը պետք է բավարարի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված՝ ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով ներկայացվող պահանջներին:
Գնման ձևը (ընթացակարգը)	շրջանակային համաձայնագրով

Գնորդ՝

ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Յունիբանկ» ՓԲԸ
հ/հ 24100200177400
ՀՎՀՀ 01501898

Գնորդի կողմից

Գ. Ամալյան

_____
(ստորագրությունը)
Կ.Տ.

Մատակարար՝

հ/հ
ՀՎՀՀ
Էլ. հասցեն՝

Մատակարարի կողմից

_____
(ստորագրությունը)
Կ.Տ.

Տեխնիկական բնութագիր

Չափաբաժին 1
600 Վտ հզորությամբ անխափան սնման աղբյուրների (UPS) ձեռքբերման (145 հատ)

Ելքը

- Ելքային հզորությունը – նվազագույնը 600 Վտ,
- Նոմինալ ելքային լարումը – 220 Վ,
- Էֆեկտիվությունը առավելագույն բեռնվածության դեպքում ոչ պակաս – 89%,
- Ելքային հաճախականությունը (սինխրոնացված էլ. ցանցի հետ) - 50Հց±3Հց
- Լարման տեսքի տիպը – սինուսոիդային ազդանշան կամ մոտեցված սինուսոիդային ազդանշանին,
- Տոպոլոգիան – գծային ինտերակտիվ,
- Լարման կարգավորումը – ավտոմատ,
- Ելքային միակցիչներ - IEC 320 C13 (Battery Backup) – 5 հատից ոչ պակաս,
- Էֆեկտիվությունը կես բեռնվածության դեպքում ոչ պակաս – 89%,

Մուտքը

- Նոմինալ մուտքային լարումը – 220 Վ,
- Մուտքային հաճախականությունը – 50Հց±3Հց (ավտոմատ ինքնորոշում),
- Մուտքային միակցիչներ - IEC -320 C14,
- Մալուխի երկարությունը - 2 մ
- Ցանցից աշխատանքի ժամանակ մուտքային լարման միջակայքը- 156-300 Վ,
- Առավելագույն մուտքային հոսանքը – 5Ա
- Մուտքային ապահովիչի հզորությունը – 10Ա

Մարտկոց

- Անհրաժեշտ է ներառել կուտակիչ մարտկոցներ,
- Մարտկոցի տիպը – կապար-թթվային (свинцово-кислотый),
- 70% բեռի դեպքում մարտկոցներից աշխատանքի տևողությունը ոչ պակաս – 10 րոպե

Կառավարում

- Վերահսկման վահանակ – մարտկոցի կարգավիճակը ազդարարող LED,
- ձայնային տագնապ – ահազանգում մարտկոցի ցածր լիցքավորվածության և գերբեռնվածության դեպքում,

Շրջակա միջավայր

- Անխափան աշխատանքը՝ շրջակա միջավայրի 0-40^{0}C պայմաններում,
- Անխափան աշխատանքը՝ օդի հարաբերական խոնավությունը - 0-95%-ի դեպքում,

Չափսերը

- Բարձրությունը ոչ ավել՝ 250մմ, լայնությունը ոչ ավել՝ 150 մմ, խորությունը ոչ ավել ՝ 350մմ,

Երաշխիք

- Երաշխիքային ժամկետը ոչ պակաս - 2 տարի,

Չափաբաժին 2
700 Վտ հզորությամբ անխափան սնման աղբյուրների (UPS) ձեռքբերման (55 հատ)

Ելքը

- Ելքային հզորությունը – նվազագույնը 700 Վտ,
- Նոմինալ ելքային լարումը – 220 Վ,
- Էֆեկտիվությունը առավելագույն բեռնվածության դեպքում ոչ պակաս – 98%,
- Ելքային հաճախականությունը (սինխրոնացված էլ. ցանցի հետ) - 50Հց±3Հց
- Լարման տեսքի տիպը – սինուսոիդային ազդանշան կամ մոտեցված սինուսոիդային ազդանշանին,
- Տոպոլոգիան – գծային ինտերակտիվ,
- Լարման կարգավորումը – ավտոմատ,
- Ելքային միակցիչներ - IEC 320 C13 (Battery Backup) – 6 հատից ոչ պակաս,
- Մեկ ելքային միակցիչ – ապահովի 7-10Ա բեռնվածք իր համապատասխան 2մ երկարությամբ մալուխով

Մուտքը

- Նոմինալ մուտքային լարումը – 220 Վ,
- Մուտքային հաճախականությունը – 50Հց±3Հց (ավտոմատ ինքնորոշում),
- Մուտքային հզորության ավտոմատ անջատիչ ոչ պակաս – 10Ա,
- Մալուխի երկարությունը - 2 մ
- Ցանցից աշխատանքի ժամանակ մուտքային լարման միջակայքը- 156-300 Վ,

Մարտկոց

- Անհրաժեշտ է ներառել կուտակիչ մարտկոցներ,
- Մարտկոցի տիպը – կապար-թթվային (свинцово-кислотый),
- 80% բեռի դեպքում մարտկոցներից աշխատանքի տևողությունը ոչ պակաս – 8 րոպե

Կառավարում

- Վերահսկման վահանակ – մարտկոցի կարգավիճակը ազդարարող LED,
- ձայնային տագնապ – ահազանգում մարտկոցի ցածր լիցքավորվածության և գերբեռնվածության դեպքում,

Շրջակա միջավայր

- Անխափան աշխատանքը՝ շրջակա միջավայրի 0-40^{0}C պայմաններում,
- Անխափան աշխատանքը՝ օդի հարաբերական խոնավությունը - 0-95%-ի դեպքում,

Երաշխիք

- Երաշխիքային ժամկետը ոչ պակաս - 2 տարի,

Չափաբաժին 3
1000 Վտ հզորությամբ անխափան սնման աղբյուրների (UPS) ձեռքբերման (2 հատ)

Ելքը

- Ելքային հզորությունը – նվազագույնը 1000 Վտ,
- Նոմինալ ելքային լարումը – 220 Վ,
- Էֆեկտիվությունը առավելագույն բեռնվածության դեպքում ոչ պակաս – 98%,
- Ելքային հաճախականությունը (սինխրոնացված էլ. ցանցի հետ) - 50Հց±3Հց
- Լարման տեսքի տիպը – սինուսոիդային ազդանշան,
- Տոպոլոգիան – գծային ինտերակտիվ,
- Լարման կարգավորումը – ավտոմատ,
- Ելքային միակցիչներ - IEC 320 C13 (Battery Backup) – 6 հատից ոչ պակաս,
- Մեկ ելքային միակցիչ – ապահովի 7-10Ա բեռնվածք իր համապատասխան 2մ երկարությամբ մալուխով

Մուտքը

- Նոմինալ մուտքային լարումը – 220 Վ,
- Մուտքային հաճախականությունը – 50Հց±3Հց (ավտոմատ ինքնորոշում),
- Մուտքային միակցիչ ոչ պակաս – 10Ա,
- Մալուխի երկարությունը – 1.8 մ
- Ցանցից աշխատանքի ժամանակ մուտքային լարման միջակայքը- 145-280 Վ,
- Smart բնիկ

Մարտկոց

- Անհրաժեշտ է ներառել կուտակիչ մարտկոցներ,
- Մարտկոցի տիպը – կապար-թթվային (свинцово-кислотый),
- 80% բեռի դեպքում մարտկոցներից աշխատանքի տևողությունը ոչ պակաս – 30 րոպե

Կառավարում

- Վերահսկման վահանակ – մարտկոցի կարգավիճակը ազդարարող LCD դիսպլեյ,
- ձայնային տագնապ – ահազանգում մարտկոցի ցածր լիցքավորվածության և գերբեռնվածության դեպքում,

Շրջակա միջավայր

- Անխափան աշխատանքը՝ շրջակա միջավայրի 0-40^{0}C պայմաններում,
- Անխափան աշխատանքը՝ օդի հարաբերական խոնավությունը - 0-95%-ի դեպքում,

Երաշխիք

- Երաշխիքային ժամկետը - 3 տարի (առանց մարտկոցի) և 2 տարի մարտկոցի համար,

Չափաբաժին 4
2000 Վտ հզորությամբ անխափան սնման աղբյուրների (UPS) ձեռքբերման (1 հատ)

Ելքը

- Ելքային հզորությունը – նվազագույնը 2000 Վտ,
- Նոմինալ ելքային լարումը – 220 Վ,
- Էֆեկտիվությունը առավելագույն բեռնվածության դեպքում ոչ պակաս – 98%,
- Ելքային հաճախականությունը (սինխրոնացված էլ. ցանցի հետ) - 50Հց±3Հց
- Լարման տեսքի տիպը – սինուսոիդային ազդանշան,
- Տոպոլոգիան – գծային ինտերակտիվ,
- Լարման կարգավորումը – ավտոմատ,
- Ելքային միակցիչներ - IEC 320 C13 (Battery Backup) – 6 հատից ոչ պակաս,
- Մեկ ելքային միակցիչ – ապահովի 7-10Ա բեռնվածք իր համապատասխան 2մ երկարությամբ մալուխով

Մուտքը

- Նոմինալ մուտքային լարումը – 220 Վ,
- Մուտքային հաճախականությունը – 50Հց±3Հց (ավտոմատ ինքնորոշում),
- Smart բնիկ,
- Մուտքային միակցիչ ոչ պակաս – 10Ա,
- Մալուխի երկարությունը – 1.8 մ
- Ցանցից աշխատանքի ժամանակ մուտքային լարման միջակայքը- 140-280 Վ,

Մարտկոց

- Անհրաժեշտ է ներառել կուտակիչ մարտկոցներ,
- Մարտկոցի տիպը – կապար-թթվային (свинцово-кислотый),
- 90% բեռի դեպքում մարտկոցներից աշխատանքի տևողությունը ոչ պակաս – 30 րոպե

Կառավարում

- Վերահսկման վահանակ – մարտկոցի կարգավիճակը ազդարարող LCD դիսպլեյ,
- ձայնային տագնապ – ահազանգում մարտկոցի ցածր լիցքավորվածության և գերբեռնվածության դեպքում,

Շրջակա միջավայր

- Անխափան աշխատանքը՝ շրջակա միջավայրի 0-40^{0}C պայմաններում,
- Անխափան աշխատանքը՝ օդի հարաբերական խոնավությունը - 0-95%-ի դեպքում,

Երաշխիք

Երաշխիքային ժամկետը - 3 տարի (առանց մարտկոցի) և 2 տարի մարտկոցի համար,

Չափաբաժին 5
3000 Վտ հզորությամբ անխափան սնման աղբյուրների (UPS) ձեռքբերման (5 հատ)

Ելքը

- Ելքային հզորությունը – նվազագույնը 3000 Վտ,
- Նոմինալ ելքային լարումը – 220 Վ,
- Էֆեկտիվությունը առավելագույն բեռնվածության դեպքում ոչ պակաս – 94%,
- Ելքային հաճախականությունը (սինխրոնացված էլ. ցանցի հետ) - 50Հց±3Հց
- Լարման տեսքի տիպը – սինուսոիդային ազդանշան,
- Տոպոլոգիան – առցանց՝ կրկնակի ձևափոխմամբ,
- Լարման կարգավորումը – ավտոմատ,
- Ելքային միակցիչներ - IEC 320 C13 (Battery Backup) – 6 հատից ոչ պակաս,
- Մեկ ելքային միակցիչ – ապահովի 7-10Ա բեռնվածք իր համապատասխան 2մ երկարությամբ մալուխով

Մուտքը

- Նոմինալ մուտքային լարումը – 220 Վ,
- Մուտքային հաճախականությունը – 50Հց±3հց (ավտոմատ ինքնորոշում),
- Մուտքային միակցիչ ոչ պակաս – 10Ա,
- Մալուխի երկարությունը – 1.8 մ
- Ցանցից աշխատանքի ժամանակ մուտքային լարման միջակայքը- 160-275 Վ,

Մարտկոց

- Անհրաժեշտ է ներառել կուտակիչ մարտկոցներ,
- Մարտկոցի տիպը – կապար-թթվային (свинцово-кислотый),
- 90% բեռի դեպքում մարտկոցներից աշխատանքի տևողությունը ոչ պակաս – 1 ժամ

Կառավարում

- Վերահսկման վահանակ – մարտկոցի կարգավիճակը ազդարարող LCD դիսպլեյ,
- ձայնային տագնապ – ահազանգում մարտկոցի ցածր լիցքավորվածության և գերբեռնվածության դեպքում,

Շրջակա միջավայր

- Անխափան աշխատանքը՝ շրջակա միջավայրի 0-40^{0}C պայմաններում,
- Անխափան աշխատանքը՝ օդի հարաբերական խոնավությունը - 0-95%-ի դեպքում,

Երաշխիք

- Երաշխիքային ժամկետը - 3 տարի (առանց մարտկոցի) և 2 տարի մարտկոցի համար,

Չափաբաժին 6
40000 Վտ հզորությամբ անխափան սնման աղբյուրների (UPS) ձեռքբերման (2 հատ)

Տիպը
- APC Smart կամ համարժեք,
- Տոպոլոգիան – առցանց՝ կրկնակի ձևափոխմամբ,
- Հզորության մոդուլային կառուցվածք - MTTR վերանկանգնման ժամանակի նվազեցման համար,
- Առանձին մուտքի բայպաս,
- Մինչև 4 անխափան սնման աղբյուր զուգահեռ միացնելու հնարավորություն

Ելքը
- Ելքային հզորությունը ոչ պակաս – 40 000 ՎԱ/32 կՎտ,
- Ելքային լարումը – եռաֆազ կարգավորվող (380, 400 կամ 415Վ) նոմինալ ելքային լարումներ,
- 50% բեռի դեպքում մարտկոցներից աշխատանքի տևողությունը ոչ պակաս – 40 րոպե,
- Էֆեկտիվությունը առավելագույն բեռնվածության դեպքում ոչ պակաս – 96%,
- Առավելագույն բեռնվածության դեպքում ելքային լարման տեսքի աղավաղումը պակաս – 5%,
- Հզորության գործակից (PF) > 0,98
- THDU – ոչ ավել քան 1.5 % (գծային) և ոչ ավել քան 3.5 % (ոչ գծային)
- Ելքային հաճախականությունը (սինխրոնացված էլ. ցանցի հետ) 50Հց նոմինալի համար – 47-53 Հց
- Ելքային լարման կարգավորումը - +/-1%
- Լարման տեսքի տիպը – սինուսոիդային ազդանշան

Մուտքը
- Մուտքային լարումը – եռաֆազ (380Վ +5%;-10%),380, 400, 415Վ,
- Մուտքային հաճախականությունը – 47-70 Հց (ավտոմատ ինքնորոշում),
- Ներկառուցված բայպաս՝ տեխնիկական սպասարկման բայպաս, ներկառուցված ստատիկ բայպաս,
- Ցանցից աշխատանքի ժամանակ մուտքային լարման միջակայքը- 304-477Վ,
- Առավելագույն մուտքային հոսանքը, ոչ պակաս – 55Ա,
- Մուտքային հզորության ավտոմատ անջատիչ - 80Ա,
- Կարճ միացման առավելագույն թույլատրելի հոսանքը – 30 կՎԱ

Մարտկոց
- Անհրաժեշտ է ներառել կուտակիչ մարտկոցներ,
- Մարտկոցի տիպը – կապար-թթվային (свинцово-кислотый), կարգավորվող փականներով (VRLA),
- Մոդուլային մարտկոցներ “թեժ” փոխարինման հնարավորությամբ,
- Մարտկոցների լիցքավորման արագությունը – ոչ պակաս 8,4 Ա

Ինտերֆեյս
- Ինտերֆեյս պորտ – DB-9 RS-232, Smart-Slot,
- WEB/SNMP ղեկավարման քարտ

Կառավարում
- Վերահսկման վահանակ – LCD, բազմաֆունկցիոնալ LCD՝ կազավիճակի և վերահսկողության վահանակով,
- Լսելի և տեսանելի ահազանգեր ըստ կարևորության նվազման առաջնահերթության,
- վթարային իրավիճակներում սնուցման անջատման առկայություն – EPO ինտերֆեյս

Շրջակա միջավայր
- Անխափան աշխատանքը՝ շրջակա միջավայրի 0-40^{0}C պայմաններում,
- Անխափան աշխատանքը՝ օդի հարաբերական խոնավությունը 0-95%-ի դեպքում,
- Առցանց ջերմաթողունակությունը - 5459.00 BTU/hr,
- Պաշտպանության կարգը – IP 20

Երաշխիք
- Երաշխիքային ժամկետը 2 տարի,
- Ետերաշխիքային ժամկետը 2 տարի:

Գնորդ՝	**Մատակարար՝**
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 **«Յունիբանկ» ՓԲԸ** **h/h 24100200177400** **ՀՎՀՀ 01501898**	**h/h** **ՀՎՀՀ** **Էլ. հասցեն՝**
Գնորդի կողմից	**Մատակարարի կողմից**
Գ. Ամալյան	
_____	_____
(ստորագրությունը)	**(ստորագրությունը)**
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված N 2
« » « » 2015թ. կնքված
N ՀՀՌՑ-15.2-ՇՀԱՊՁԲ-11/12 գնման պայմանագրի

Մատակարար	***Գնորդ***
հասցե	հասցե

« ____» « _____ » 2015թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

Պայմանագրի անվանումը՝ Վառելիքի գնման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «_____» 2015թ.
Պայմանագրի համարը՝ N ՀՀՌՑ-15.2-ՇՀԱՊՁԲ-11/12
Գնորդը «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, ի դեմս պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Հ. Հակոբովի և Մատակարարը՝ ի դեմս _____, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Մատակարարը «___ » « » 2015թ–ից մինչև « » « » 2015թ. ընկած ժամանակահատվածում մատակարարել է հետևյալ ապրանքները

Չ/հ	Մատակարարված ապրանքի համառոտ նկարագիրը	քանակական ցուցանիշները	մատակարարման ժամկետը	վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	վճարման ժամկետը
1					
2					
3					
	Ընդամենը՝				

Ապրանքը հանձնեց

_____
(ստորագրություն)
ազգանուն _____
Կ Տ

Ապրանքը ընդունեց

_____
(ստորագրություն)
ազգանուն _____
Կ Տ